կասկածեալ էք այժմ 'ի բանից Ցունաց, գրեցէք 'ի Դուռն որպէս վայելէ մեծութեան ձերում, ես ոչ կարեմ գրել թէ Պատրիարքն Ցունաց չէ գրեալ, եւ թէ 'ի դատին այնպիսի բանք չեն լեալ »։

Ցետ այսր ամենայնի կոչեաց նաեւ Դատաւորն զՀայս, և եցոյց նոցա զգիր Կուսակալին, եւ պատուէր առ ինքն բաւական լինել և դադարիլ, զգործ Ծննդեան և Աստուածածնի 'ի Ժողովի վճարել, գրել Իլամ և առաքել առ ինքն և ծանուցանել Տէրութեան, թէ այսպէս պարտ էր լինիլ։ Եւ յաւել ասել Դատաւորն. Հայք ընդդէմ իրաւանց Տէրութեան՝ և հրամանաց նորին խօսիլ և գործել համարձակին։ Նոքա ասեն. հպատակ եմք Տէրութեան և հնազանդ հրամանի նորա, երկնչիմք ինքնագլուխ գործել ինչ, որպէս գիտէք այնպէս գրեցէք, սակայն եթէ ըստ հրամանի Կուսակալին առնէք վճիռ ինչ 'ի Ժողովի, չտամք երբէք պատասխանի ընդդէմ հրամանի Արքային, այլ գրեմք առ աղդն մեր 'ի Կոստանդինուպոլիս և ծանուցանեմք Թագաւորին, և զոր ինչ հրամայեսցէ նա՝ այնպէս առնեմք։ Առ այս Դատաւորն ոչ կարաց խօսիլ և ոչ ժողով գումարել, և Մուվէլլայն հրաժարեցաւ երթալ 'ի Ժողով Դատարանի. սակայն չեղեւ յայտնի թէ զի՞նչ գրեաց Դատաւորն Կուսակալին, և յորդորէր զՀայս տալ Իլամ վասն բաժանորդութեան հիւսիսային դրան Բեթղեհէմի, և Ս. Աստուածածնի ըստ հրովարտակին Սէլիմայ. զի գիտեմ ասէր, Ցոյնք օգնութեամբ Բդեշխին առնուն յինէն Իլամ և հանրագիր 'ի քաղաքացեաց չունել իրաւունս Հայոց. զի ամենեքեան վկայեն թէ գուցէ տեսեալ եւ կամ լուեալ իցէ մեր՝ Հայոց տիրել Ծննդեան տեղւոյն. նախ քան զգրել Բդեշխին ինձ զայսմանէ, տաց ձեզ Իլամ, և յետ այնորիկ չէ հնար ումեք այլոյլել զայն։ Ասեն ցնա Հայք. դու զմեզ կարեւէր խոցեալ վիրաւորեցեր զսիրտս մեր, և արկէր զմեզ 'ի վտանգս յայս, և այժմ կամիս զվերս մեր պատել. սակայն բարւոք 'ի միտ առեալ ծանեաք, որ այսուհետեւ չլինի երբէք օգնութիւն 'ի քէն, զի դու իսկ ըզհրաման Արքայի արհամարհեցեր, զո՞րպիսի Իլամս տալ խոստանաս, մեռացէ առ այժմ այդ։ Զի ծանեան զիարդ ախս միտս նորա, որով զխոստացեալն Հայոց, կամէր ան-